կամ (լաւ ևս) հոգւով ծերացեալք և հասունացեալք. ասել է որ առջիններու մէջ հոգւոյն զօրութիւնք ոչինչ կամ քիչ յեղափոխութիւն ունեցեր են, կամ թէ՝ 'ի չար կողմն զարգացեր են. իսկ ետքիններուս մէջ՝ շատ և շուտ եղեր են յեղափոխութիւնք, և դէպ 'ի լաւն։ — Ասոնցմէ ոմանք ոչ միայն անձնական հասունութիւն մը ստացեր են, այլ և ազնիւ ջանքով և գործքերով հասարակաց ալ շուտով հասունութեան պատճառ են եղեր օգտակար յեղափոխութեամբ մը. ինչպէս, զանազան ժողովրդոց օրէնսդիրք կամ ազգային բարերարք, և համաշխարհի օգտաբերքն՝ պիտանի գիւտերով և դիւրութեամբք. կամ իմաստունք՝ ուղիղ և կարևոր գիտութեամբք և ծանօթութեամբք։ — Ասոնցմէ ոմանք ամբողջ քաղքի, տէրութեան, ազգի մը յեղափոխիչք են եղեր, և կրնանք ըսել թէ այնչափ անդամ ապրեր են՝ որչափից որ օգուտ ըրեր են. և այնչափ երկար կ'ապրին՝ որչափ որ դեռ այն օգուտը կը վայելուի, կամ իրենց ըրած յեղափոխութիւնն՝ դեռ կը տիրէ յաշխարհի 'ի քաղաքականութեան, յարուեստս և 'ի գիտութիւնս։ Ասոնց հակառակ ոմանք ալ նոյնպիսի մեծ և աղդու գործքերով՝ բայց դէպ 'ի չարն՝ ըրեր են մեծամեծ յեղափոխութիւններ յընկերութեան և 'ի քաղաքականութեան, բայց 'ի ցնաս նոցին և 'ի կործանումն։ Որչափ որ առջիններն են մեծք, գովելիք, պաշտելիք և անմահանալիք, այնչափ ալ ասոնք ցածք, պրժդալիք, անիծելիք և անյիշելիք։ — (Կըրնաս օրինակի համար մեր ազգային պատմութեան մէջ յիշել այսպիսի հակառակներ. ՏՐԴԱՏ և Արշակ Բ. ՎԱՍԱԿ և Սահնատրուշ. ՆԵՐՍԷՍ և Մրչիւնիկ. ՎՌԱՄՇԱՊՈՒՀ և իր որդին Արտաշիր. ՍԱՀԱԿ և Սուրմակ. ՄԵՍՐՈՎՊ և Մեղրուժան. ՎԱՐԴԱՆ և Վասակ. ՎԱՀԱՆ և Գողիհոն. ԹՈՐՈՍ և Մլեհ. և այլն։)

Արդ յետ ամենայնի՝ պէտք է յիշենք որ այս յեղափոխութիւնքս կ'ըլլան 'ի ժամանակի. և ժամանակն ալ իր սահմանն ունի. որ երբ հասնի՝ անժամանակն և յաւիտենականն (Աստուած) պիտի շարժէ բոլոր մարդկութեան մեծարուն ծառը. ամենքն ալ պիտի թափին պտղոց նման, թէ հասուն թէ տրհաս։ Մինչև որ դայ այն կէտը՝ անշուշտ մեր ազգին վիճակն ալ պիտի յեղափոխի և թերևս շուտ շուտ ալ. բայց ոչ դէպ 'ի լաւ կողմը՝ ինչուան որ ես և դու առանձինն չյեղափոխիկք 'ի նոյն լաւն. և մեզի նման՝ ամեն կամ բազմագոյն մերազգիք... ինչուան որ շատ մը եաք և դուք՝ յեղափոխեալք 'ի լաւ՝ չկազմեն հասարակութիւն մը՝ որուն ամեն մէկ անհատն գիտնայ և կատարէ իր պարտքը՝ յօգուտ անձին և ազգին. — և ինչուան որ այն սակաւաթիւ քանի մը եսերն ալ՝ որ դեռ կրնան մեծ գործեր ընել, ունենալով՝ (որ և է իրաւամբ) ընդարձակ իշխանութիւն մը, հեղինակութիւն մը, և ազդեցութիւն մը, չդարձրնեն ուժերնին իրենց առանձնական կամ չափաւորեալ շահէն և նպատակէն դուրս՝ դէպ 'ի շահ և յօգուտ բոլոր հասարակութեան վրայ։ Մանաւանդ որ եթէ ասոր վրայ չընեն բարի յեղափոխութիւն մը, չեն ալ կրնար չընել չար մը. թէպէտ և կրնայ ըսուիլ թէ գոնէ նոյն վիճակին մէջ կը թողուն զհասարակութիւնը, բայց բարոյապէս անհնար է այս. վասն զի եթէ այդ մը նայուն վիճակն՝ չէ յեղափոխութիւն մը՝ հասունութիւն մը դէպ 'ի բարին, հապա ինչ է։...

Փ. Փ.

Ա. ԶԳԱՑԻՆ ԵՐԳՔ

ԲՈՀԵՄԱՑ

Կոտորած Սաքանիացւոց.

Ո՛վ լուսաբուղխ արևակ, արփի հրատոչոր, սէր մեր, հիմ այդպէս տխրագինս հայիս 'ի մեզ. ընդէ՞ր առաքես նը-շոյլս տժգոյնս՝ 'ի խորտակեալ Բոհեմիացիքս։ — Ասա՛ մեզ, յո՞ չդաւ տարադէմ իշխանն մեր. ասա՛, ո՞ւր են բա-

նակք մեր ։ — Նա՛ . . . խոյս ետ յապա֊
րանս Ոգինոյ ։ . . . Թշուառական որբա֊
ցեալ աշխարհ ։ . . . Ո՞ փրկեսցէ զքեզ .
զու ինքն ։ . . . Ո՞ դարձուսցէ յետս 'ի
քէն զբազուկս հզօրին ։ Աղէ հայեաց ։
— Հուպ մատչին ջոկերք թշնամեաց .
Քանի՛ երկայնագիծ գունդ գունդ իջա֊
նեն 'ի կրճից անտի լերինն և խոյանան
'ի ձորս մեր ։ Ժողովուրդ տառապեալ ։ ...
Հարկ իցէ քեզ տալ նոցա զոսկիդ, զար֊
ծաթ և զամենայն ինչ . տաղաւար քո
և տաղաւարք հարց քոց ողորմելա֊
տեացք 'ի ճարակ հրոյ մատնեսցին 'ի զօ֊
րաց նոցա ։ — Ո՛հ, զերեն զերփեն նոքա
զոսկի մեր և զարծաթ . հրով դատեն
զբնակարանս մեր . 'ի փախուստ դնեն
զզօրս մեր և ահա արշաւեն թափին
դան 'ի Դրոսդի ։

Մի՛ լար, մի՛ լար շինականդ երկչոտ .
տեսցես վաղվաղ զաճել և զկանաչա֊
նալ խոտոց 'ի դաշտս Բոհեմիոյ, զա֊
ռատութ կոխելոց 'ի թշնամեաց ։ Զգեց֊
ցին զզօրութիւն փոյթ ընդ փոյթ բա֊
զուկք մեր կթոտք՝ 'ի հնձել ժողովել
անտի ծաղկունս գունագոյնս՝ յօրինել
պսակս դիւցազանց մերոց ։ Հայեա՛ց ։
Ահա փթթին բողբոջին սերմանիք գար֊
նայնոյ ։ Յաջորդեսցէ մեզ վաղվաղակի
բարօրութիւն ։ — փոփոխեսցի բաղդս
մեր ։

Հայեա՛ց . . . Պէնէշ 'ի խորհուրդ կոչէ
զժողովուրդն համօրէն, և ժողովուրդն
ինքնին դարձուսցէ ընդ կրունկն զՍաք֊
սոնս ։ Գունդն պահապան սեպացեալ
ամրոցին՝ վաղէ հեղեղօրէն յանտառս
և 'ի դաշտս, յառաջէ սրանայ կրելով
փոխան զինուց զբիրս . և ահա թափի
զթշնամեօք ։ — Պէնէշ, Պէնէշ է առա֊
ջինն . բուռն զօրութեամբ և կատաղի մո֊
լեգնութեամբ ընթանան ամենեքեան ։
— Գոչեն . «Վրէժ ։ Վրէժ յապականչաց
երկրի մերոյ ։ — Վրէժք 'ի տուն Սաք֊
սոնաց ։ — Վրէժխնդրութիւն, զարթիր
'ի զօրս մեր ։ — Վրէժխնդրութիւն, վա֊
ռեա՛ բորբոքեա զմիոյ միոյ զսիրտ ։ —
Վրէժխնդրութիւն, փայլեա՛ց յաչս ի֊
րաքանչիւր» ։ Երկոքին ևս կողմանք խր֊
րոխտան զոռան ահընկէց սպառնա֊
լեօք ։ Խառնին ընդ իրեարս . բիրք ըզ֊
բիրս վանեն, աշտէք զաշտեայս . և կո֊
փինք իրանաց հերձանեն շառաչմամբ
զօդս իբրև զճայթիւնս յանտառի . սու֊
սերք ընդհարեալք՝ հատանեն ճաճանչս
լուսոյ իբրև 'ի շանթից կայծականց ։
Գոչիւնք ահաւորք, ձայնք խռովալիցք
դղրդեն և պակուցանեն զամեհի զա֊
զանս խուլ և մթին անտառաց և զհաւս
եթերաճեմս ։ Գանգիւն ձորոյն՝ բաղ֊
խեալ զբարձրաբերձ կատարս լերանց,
վերադառնայ յերկիր անդր ահագնա֊
դղորդ . բիրք և սուսերք մեծամեծք ըզ֊
միմեամբք զարկուցեալք՝ բերեն զնմա֊
նութիւն օտարախառն ձայնի մահու ։
Կացին այսպէս անյողդողդք և անյաղթք
ճակատքն երկոքեան, ոտք խրեալք արմա֊
տացեալք և սևեռեալք 'ի գետնի ։ Պէնէշ
ելեալ 'ի վեր 'ի ժայռ մի լերինն՝ բարձրա֊
ցոյց զսուր իւր վիթխարի յաջ թև իւրոյ
ջոկատուն . այլ նուաղէր ոյժ և կար նո֊
րուն . դարձաւ ապա զէնն 'ի ձախա֊
կողմն կոյս, անդր և արդար զօրութիւն
իւր . զօրականք իւր քաջամարտիկք
մագլցեալ ճեպեալ 'ի վեր 'ի պատա֊
ռուածսն, գլեն թափեն 'ի թշնամիս
վիրգս վիմաց անհեթեթս ։ — Լուա֊
րո՛ւք . վառեցաւ բորբոքեցաւ խաղմն ։
Ունկն դիք 'ի դաշն կոյս . — հեծու֊
թիւնք ։ . . . Ո՛հ, վէրս առնուն, խոցո֊
տին, խոյս տան Գերմանք ։ . . . Տա֊
պաստ անկանին թաւալգլորք ։ . . . Մեր
է յաղթութիւն ։

Երգ Հնձոց զոր երգէին Հնձեալք 'ի բաղխիլն
ընդ թշնամիս .

(յօրինեալ 'ի 1480)

Նահատակքդ, որք պահէք զանանց
օրէնս Ամենակալին, կարդացէք և զա֊
նուն նորին, կոչեցէք 'ի թիկունս . և
ահա դղրդիւն և դոփիւն ոտից ձերոց՝
կալցէ զոսոխս ձեր անշարժս յահէ և
յերկիւղէ ։

Ընդէ՞ր իցէ ձեզ դողդոջել և լքանել .
մինչ նա՝ . վասն որոյ մարտնչիքդ՝ ո՛չ
հսկիցէ 'ի վերայ ձեր . կեանք և սէր, և
ամենայն որ սիրելին է՝ յորդեն առա֊

տարար 'ի սուրբ կամաց նորա։ Նա պըն-
դեսցէ զսիրտս ձեր, և նա պարգևեսցէ
զօրութիւն ընդդէմ չարին։ Եւ ընկալ-
ցիք դուք 'ի ցեռանէ օրհնութիւնս
բիւր, փոխան վաղանցուկ կենաց եր-
կրի՝ տացէ ձեզ զյաւիտենականու-
թիւնն։ Զի որ մեռանի վասն ճշմար-
տութեան՝ կեցցէ 'ի յաւիտեան։

Կանգնեցէք արդ զգեղարդունս,արքդ
զօրաւորք բանիւ, զի արութիւն եղիցի
ձեզ 'ի զէն մահաւորթ. և դուք ծառայք
ցեռան, մարտերուք արիաբար և ան-
սասան։

Հիմ զանգիտել ձեզ 'ի թշնամեաց,
որքան և իցէ թիւ նոցա։ Մի թէ թողցէ
ցէր զձեզ։ Ո՛չ... նովաւ և ընդ նմա՝
ցիր և ցան սփռեսցիք զսէգ և զամբար-
տաւան գունդս թշնամեաց ձերոց։

Ո՛չ ածէք զմտաւ զհին ձեր առած։
— Ունկն դիք. «Բոհեմիացիք, փառա-
ւոր է սպաս հարկանել զվիսոյ ազնուա-
կանի, տանել զդրօշ և բարձրացուցա-
նել բարձր զնշան նորա յաղթական»։

Եւ դուք, պիղծք և հուղկահարք,
հայեցարուք գամ մի ընդ վտանգն որ
զձեզ պատէն պաշարէ։ Կացէք մնա-
ցէք դուք անդ առկախեալք 'ի խորխո-
բատ աղամղի և տառապանաց, ուրա-
նօր դաւ և ազահութիւն ընդ հուպ խո-
բառոյզ արասցեն զձեզ։ Խորհեցարուք
քաջ, խորհեցարուք մինչդեռ կայ ձեզ
հնար տակաւին. խոյս տուք, ապրե-
ցարուք 'ի վտանգէն, և յօգուտ արկէք
զօրդ, ով արք ամբարիշտք։ Ահա վախ-
ճան՝ որ լարէ զորոգայթ ոտից անմե-
ղին։

Ի պահու անդ արիւնռուոդ պատե-
բազմին, մի միայն բան. — Կալարուք
զզէնս ձեր վասն արդարութեան. և
Տէր, միայն ճշմարիտ զօրութիւն ձեր,
պնդեսցէ զթուլացեալ բազուկս ձեր. —
այլ մի և միում ումեք խնայել, կամ
առնել շնորհուկս՝ ո ոք և իցէն։

Կապտագոյն ընդուսաֆ լճեր Ամերիկայի մէջ.

Այս երկիրը ըստ բաւականի ամէն կողմանէ ճանչցուած է գրեթէ բոլոր Եւրոպայի ազգաց, որուն վրայօք մեծամեծ գովեստներով խօսած և գրած են շատ ճանապարհորդներ՝ որոնք դէպ 'ի ան կողմերը տեսնելու դնացեր են և օրէ օր դեռ կ'երթան, այլ և այլ դիտողութիւններ ընելով։

Այս երկրին զարմանալիքներէն մէկը կը սեպուին կապտագոյն ընուսաֆ լճերէն ոմանք, Հագբորդ քաղաքէն 7 մղոն հեռու, Իւքիահ–Սիդքս կոչուած քաղաքին ճամբուն վրայ, որով ճամբորդաց փափաքը և հետաքրքրութիւնը աւելի շատցաւ՝ այս աղուոր և զարմանալի լճերը տեսնելու համար, որ Ամերիկայի նորութիւններէն մէկը կրնան սեպուիլ, միանգամայն և բնական։ Ասոնց չորս կողմը լեռներով պատած են, որոնց ծայրերը ան մեծամեծ և խորունկ լճերուն մէջ կը տեսնուին, և այն է պատճառը որ ջուրը այնպէս կապոյտ գոյնով կ'երևայ։ Ան աստիճանի մաքուր և թափանցիկ է աս լճերուն ջուրը, որ աչքով մինչև 20 և 30 ոտք խորութեամբ եղած բանը մէջը որոշ կերպով կը տեսնուի։

Այս կապտագոյն ընուսաֆ լճերը բաղմաթիւ են Ամերիկայի մէջ և քիչ շատ մէկ մէկու հաւասար մեծութեամբ։ ասոնց երկայնութիւնը 1 մղոն, իսկ լայնութիւն ½ մղոնի չափ է ամենաստոյգ հաշուով։ Անօգուտ տեղ փորձեցին ասոնց խորութիւնը իմանալու համար, և մինչև ցայսօրս ստոյգ չէ, և այնպէս կը համարուի որ ալ ասկէ վերջն ալ պիտի չկարենան անոնց ստոյգ չափը իմանալ։ Այս ջուրերուն մէջ կը գտնուին ամէն տեսակ գեղեցիկ ձկներ, մանաւանդ կարմրախայտ ընուսաֆը, գետաձրկներ և այլն. մէկ խօսքով այնպիսի համեղ ձկներ որոնք մեծամեծաց սեղաններուն պատիւ կրնան ընել։